ՉԻՆԱԿԱՆ ՍՏՐԱՏԱԳԵՄՆԵՐԸ ՓՈՔՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Ա. Գ.

Փոքր պետությունների ծագումը սկիզբ է առնում վաղնջական ժամանակներից: Երեք հազար տարի առաջ չինական քաղաքակրթության ծաղկման շրջանին է վերագրվում կենտրոնի կապերը ծայրամասային, բուֆերային պետությունների («վայ-ֆան») և փոքր իշխանություն-պետությունների («վայ-գո») հետ: Չինական պատմությունը հարուստ է փոքր երկրների հետ հարաբերությունների, միությունների և բուֆերային դիվանագիտության նկարագրությամբ: Իսկ չինական ռազմավարական մտքի արգասիք յուրահատուկ «դիվանագիտական ստրատագեմները» (խարդավանքները) էական ազդեցություն են թողել սահմանակից փոքր երկրների ճակատագրերի վրա: Ստրատագեմը գործողության ալգորիթմ է քաղաքական, դիվանագիտական, ռազմական, տնտեսական և անձնական նպատակներին հասնելու համար: Չինական ստրատագեմային մոդելը հիմնված է ինտելեկտուալ որոգայթների և պարադոքսալ, ոչ սովորական տակտիկական համադրումների վրա, որոնք խաղարկվում են գլխավորապես դիվանագիտական բանակցությունների ժամանակ:

«Ստրատագեմիզմը դարձավ ազգային խառնվածք, ազգային հոգեբանության առանձնահատկություն: Սակայն դա ամենևին չի նշանակում, որ չինացիները ճարպիկ խաղացողներ են, խորամանկ խաբեբաներ: Ամենևին: Դա մի ժողովուրդ է, որն առաջին հերթին ունի ռազմավարական մտածողություն, կազմում է երկարաժամկետ պլաններ՝ ինչպես պետական, այնպես էլ անձնական մակարդակով, կարողանում է հաշվարկել իրադրությունը շատ քայլերից առաջ և օգտագործում է ռազմավարական որոգայթներ՝ հաջողության հասնելու նպատակով»[1]: Ստրատագեմը հիշատակվում է Սունցզիի (Ք.ա. 551-479 թթ.) ռազմական արվեստի վերաբերյալ տրակտատում, որն աշխարհի ամենահին ձեռագիրն է, իսկ հեղինակը Կոնֆուցիոսի հասակակիցն է: Անտիկ դարերում ստեղծված 36 ստրատագեմներն այսօր էլ չեն կորցրել իրենց քաղաքական արժեքը և լայնորեն կիրառվում են, ինչպես մեծ և միջին, այնպես էլ փոքր պետությունների դիվանագիտական գործառույթներում:

Կանգ առնենք ստրատագեմներից մի քանիսի վրա, որոնք անհիշելի ժամանակներից կիրառվել են միջպետական հարաբերություններում, ինչպես պատերազմների, այնպես էլ դիվանագիտական բանակցությունների ժամանակ, հանդիսացել են ճնշման, թալանի և բռնության գործիք հատկապես մեծ երկրների ձեռքին՝ փոքր պետությունների նկատմամբ:

---

[1] **Мясников В. С.** *Антология хитроумных планов, предисловие к книге* **Харро фон Зенгера** *"Стратагемы", т. 1, М., 2004, с. 10.*

Ստրատագեմ N 5. *«Հափշտակել հրդեհի պահին»: Կոչվում է նաև «գիշանգղի ստրատագեմա»: Սունցզին հետևյալ կերպ է մեկնաբանում այս ստրատագեմը. «Երբ թշնամին հայտնվել է քաոսային վիճակում, եկել է նրան հաղթելու ժամանակը»: Միջազգային հարաբերությունների առումով դա նշանակում է օգտվել այլ պետության դժվարություններից, քաոսային վիճակից, զենքի ուժով ծնկի բերել նրան կամ բանակցությունների միջոցով հասնել դրված նպատակներին: Պատմությանը հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ կիրառվել է N 5 ստրատագեմը: Օրինակ՝ Խորհրդային Միության հարձակումը Աֆղանստանի վրա 1979 թվականին: «Հրդեհը», որից օգտվեց ԽՍՀՄ-ը՝ Թարաքիի պետական հեղաշրջման փորձի հետևանքով Աֆղանստանի անկայուն վիճակն էր, քաոսային իրադրությունը Իրանում և ԱՄՆ-ի կաթվածահար վիճակը՝ Թեհրանում ամերիկյան դիվանագետներին պատանդ վերցնելու հետևանքով»[2]: Մասնագետների կարծիքով նույն ստրատագեմն է գործել Վերսալյան բանակցությունների ժամանակ, երբ «Անգլիայի պրեմիերմինիստր Լլոյդ Ջորջը խոստացել էր Գերմանիայից «քամել» ամեն ինչ, «մինչև վերջին կաթիլը»: Իրոք, դաշնակիցները պահանջեցին 5 մլրդ դոլար ռազմատուգանք, սառեցվեցին գերմանական արտասահմանյան դրամական միջոցները 7 մլրդ դոլարի չափով, բացի այդ, Գերմանիան հրաժարվում էր իր տարածքների 13%-ից՝ հօգուտ Լեհաստանի, Ֆրանսիայի և Բելգիայի: Գերմանական բանակը կրճատվում էր՝ թողնելով ընդամենը 100 հազար կամավոր[3]: Հենրի Քիսինջերը նման պատժամիջոցները Գերմանիայի նկատմամբ համարում է սխալ ու անարդարացի երկու պատճառով. նախ՝ պատերազմի սանձազերծման և հետևանքների մեղքը միայն Գերմանիայինը չէին, երկրորդ՝ բիրտ ուժը միշտ ծնում է հակաուժ: «Այսպիսով, նրանք, ովքեր սահմանեցին վերսալյան կանոնակարգը՝ հասան ճիշտ հակառակ արդյունքի: Նրանք փորձեցին թուլացնել Գերմանիան ֆիզիկապես, փոխարենը նա ամրապնդվեց աշխարհաքաղաքական առումով: Երկարաժամկետ պլանով Գերմանիան Վերսալից հետո հայտնվեց շատ ավելի շահավետ վիճակում, քան մինչև պատերազմն էր, և ի զորու դարձավ գերիշխել Եվրոպայի վրա: Գերմանիան զինաթափման կապանքները թոթափելուն պես, որի համար ընդամենը ժամանակ էր հարկավոր, վերածնվեց և դարձավ շատ ավելի հզոր, քան երբևիցե եղել էր»[4]: N 5 ստրատագեմը բազմաթիվ անգամներ կրկնվել է պատմության նոր շրջանի դրամատիկ դրսևորումներում, որոնք անմիջականորեն առնչվում են հայ ժողովրդի ճակատագրին: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո թուրքական սահմանի հարցը շոշափվել է վեց տարաբնույթ պայմանագրերում: Դրանք են՝ ա)1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, բ) 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը, գ)*

---

[2] **Зенгер Харро фон**, *указ. соч., с. 116.*

[3] **Васильченко И. А.** *Политические переговоры, М., 2011, с. 148.*

[4] **Kissinger H.** *Diplomacy, N. Y. , 1994 , p. 245.*

1920 թ. դեկտեմբերի 3-ի Ալեքսանդրապոլի պայմանագիրը, դ) 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը, ե) 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագիրը և զ) 1923թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագիրը: Այդ պայմանագրերից օրինական են միայն երկուսը՝ Սևրինն ու Լոզանինը[5]: Մոսկվայում կայացած ռուս-թուրքական բանակցությունների արդյունքում, որոնց Թուրքիայի պահանջով հայերը չմասնակցեցին, Հայաստանը կորցրեց Կարսը, Արդահանը, Սուրմալուն և Արդվինը: Հայաստանը կորցրեց ավելի քան 25 հազ. ք. կմ տարածք, որից 19,915 հազ. կմ² խլեց Թուրքիան: Իսկ 5,5 հազ. ք.կմ կազմող Նախիջևանի մարզը դառնում էր ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության տակ՝ առանց երրորդ պետության զիջվելու իրավունքի: Մոսկովյան բանակցությունները շատ թանկ նստեցին հայ ժողովրդի վրա և ունեցան ճակատագրական նշանակություն: Առաջին աշխարհամարտի «հրդեհի» և «քաոսի» պայմաններում Ռուսաստանը և Թուրքիան փորձեցին լուծել իրենց աշխարհաքաղաքական և ռազմաքաղաքական խնդիրները. թուրքերը, բացի հայկական հողերը զավթելուց, ապահովեցին իրենց արևելյան ճակատն ու բանակը տեղափոխելով արևմտյան ճակատ՝ հաղթանակ տարան Հունաստանի դեմ: Հայկական հողերը նվիրելով քեմալականներին՝ Մոսկվան կանխեց նրանց հնարավոր անցումն Անտանտի կողմը և Արևմուտքին հարելը (միառժամանակ): Սակայն բոլշևիկների նվիրական երազանքը՝ Թուրքիայի և Արևելքի մյուս պետությունների միջոցով սկսել համաշխարհային հեղափոխություն՝ այդպես էլ չիրականացավ:

***Ստրատագեմ N 9**: «Դիտարկել հրդեհը հանդիպակաց ափից»: Սա դիվանագիտական խաղարկում է, երբ դիտողը ձևացնում է, թե ոչ մի կապ չունի կատարվածի հետ: Անտարբեր հետևում է ծանր վիճակում, ճգնաժամի մեջ հայտնված հակառակորդին: Ոչ մի օգնություն, ոչ մի միջամտություն կամ վաղաժամ գործողություն, մինչև որ գործընթացը չզարգանա հօգուտ դիտորդի, և միայն հետո գործել հասունացած պտուղները քաղելու համար: Կոչվում է նաև «Չմիջամտելու ստրատագեմ», «սպասման, հապաղման ստրատագեմ»: Այն չինացիների մոտ շատ է տարածված հետևյալ ասացվածքով. «Լե-ռանը նստած՝ հետևել վագրերի կռվին»: Առասպելը պատմում է. «Մի անգամ որսորդը նկատում է երկու վագրերի, որոնք հոշոտում են ցուլին: Որսորդը դուրս է քաշում սուրը պատյանից և պատրաստվում է հարձակվել գիշատիչների վրա: Սակայն որսորդի ընկերը բռնում է նրա ձեռքն ասելով՝ «Սպասիր, այդ վագրերը նոր-նոր են սկսել ուտել, թող որ նրանք հագուրդ տան իրենց ագահությանը: Հետո նրանք անպայման հարձակվելու են իրար վրա: Մեծ վագրը, անպայման, կրծոտելու է փոքրին, բայց ինքն էլ վիրավորվելու է: Համբերիր, և այնժամ առանց դժվարության՝*

[5] *Տե՛ս Արա Պապյանի հարցազրույցը Ա1+, 23 հունվարի, 2007:*

երկու վագրերին էլ կսպանես»[6]: Առասպելի խրատը քաղաքական առումով այն է, որ բանակցային գործընթացում փորձված դիվանագետը ուշադիր հետևում է մյուս գործողների դիրքորոշմանը, ամենակարևորը՝ նրանց հակասություններին ու փոխադարձ պայքարին, այնուհետև, ճիշտ հաշվարկելով, սեղանին է դնում իր փաստարկները, առաջարկություններն ու պահանջները՝ իրադրությունն իր օգտին ծառայեցնելով: Թվացյալ անգործությունն ու անտարբերությունը վերածվում են եռանդուն գործողության: «Վագրերի կռվին հետևելու» ստրատագեմին հատուկ ուշադրություն է դարձրել Մաո Յզեդունը և այդ դիվանագիտական ձեռնածուփյան մեջ հաճախ է մեղադրել իր քաղաքական հակառակորդներին: 1939 թվականին Մաոն մեղադրում է Արևմտյան երկրներին Չինաստանի դեմ Ճապոնիայի ագրեսիան կազմակերպելու մեջ: «Նրանք հրահրում են Ճապոնիային Չինաստանի դեմ, իսկ իրենք «լեռան վրայից հետևում են վագրերի պայքարին», - ասում է չինացիների ղեկավարը: Մաո Յզեդունը նույն մեղադրանքն է ներկայացնում ԱՄՆ-ին, Ֆրանսիային, Անգլիային Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին, որոնք չէին ցանկանում համախմբել ուժերը ԽՍՀՄ-ի հետ ֆաշիստական Գերմանիային դիմակայելու համար: «Ամիջա-մտելու» քաղաքականությունը, որը վարում էր միջազգային, և առաջին հերթին, անգլո-ֆրանսիական հետադիմությունը, «լեռան վրայից վագրերի կռվին հետևելու» քաղաքականությունն է, որն ուրիշի հաշվին ապրելու իսկական իմպերիալիստական քաղաքականություն է»[7]: Այդ նույն ստրատագեմն է կիրառում Թուրքիան իր մերձավորաևելյան քաղաքականության մեջ: Անկարան «լեռան վրայից» դիտում է Իսլամական պետության և քրդական ռազմական ստորաբաժանումների (PKK) կատաղի բախումները Թուրքիայի սահմանի երկայնքով: Իսկ Էրդողանը Թուրքիայի քրդերին արգելում է անցնել սահմանը իրենց հայրենակիցներին օգնելու համար: Թուրքերը, այսպիսով, իրենց դիվանագիտական խաղերն են տալիս: Նրանք ցանկանում են, որ իսլամիստներն ու քրդերը կոտորեն իրար, որքան շատ՝ այնքան լավ: Խնդիրն այն է, որ եթե քրդերն հաղթեն իսլամիստներին, ապա նրանց դիրքերը կամրապնդվեն Թուրքիայում, որից Անկարան սարսափում է: «Ընդհանրապես Թուրքիայի թշնամիների ցուցակում առաջին տեղը զբաղեցնում են քրդերը, երկրորդը՝ Բաշար Ասադի կառավարությունը, և միայն երրորդը Իսլամական պետությունն է»[8]:

Ստրատագեմ N 10: *«Ժպիտի տակ թաքցնել դաշույն»: Այն անվանում են նաև «Յանուսի գլուխ» կամ «Հուդայի համբույր»: Դիվանագիտական հարաբերությունների և բանակցությունների ընթացքում, երբ փորձում են թշնամանքը թաքցնել բարեկամական, գեղեցիկ խոսքերի քողի ներքո, բթացնել դիմացինի զգոնությունն ու շեղել նրա ուշադրությունը, օգտվում են*

---

[6] **Зенгер Харро фон,** *указ. соч., с. 180.*

[7] *Там же, с. 181.*

[8] *Аргументы и факты, N 42, 2014, www.AIF.RU*

այս ստրատագեմից: Չինական գրականության մեջ թվարկվում են այս ստրատագեմի դասական օրինակներ պետությունների հարաբերություններում՝ որակելով դրանք որպես «Դիվանագիտական ժպիտներ՝ դաշույնը թաքցնող ժպիտի հետևում»: Վիետնամը 1979 թ. Կամբոջայի վրա հարձակվելուց առաջ փորձում էր շեղել Հարավարևելյան Ասիայի երկրների ժողովուրդների ուշադրությունը՝ խոսելով տարածաշրջանային համագործակցության զարգացման մասին: Իսկ նույն թվականին, Աֆղանստան զորքեր մտցնելուց առաջ, ԽՍՀՄ-ը համոզում էր իր և համաշխարհային հասարակայնությանը, թե խաղաղ համագործակցություն է զարգացնում աֆղանների հետ[9]: Ստրատագեմի տարբեր մոդելներ հաճախ են հանդիպում թուրքական դիվանագիտական գործելակերպում: Օրինակ՝ վերոնշյալ ստրատագեմը պարզ երևում է Թուրքիայի նախկին վարչապետ Էրդողանի ուղերձում Հայոց ցեղասպանության հիշատակման օրվա կապակցությամբ: Էրդողանը, 1915 թ. դեպքերը որակելով որպես Առաջին աշխարհա-մարտի ժամանակ Օսմանյան կայսրությունում ստեղծված իրավիճակի արդյունք, իր ուղերձում ցեղասպանությունն անվանում է պարզապես «տեղահանություն»: Էրդողանի համոզմամբ՝ «ժողովրդավար Թուրքիան» բավականաչափ հասուն է և կարող է հանդուրժել ապրիլի 24-ին կայանալիք հիշատակման արարողությունները: Նրա ելույթի ամենաուշագրավ հատվածներից են 1915 թ. Օսմանյան կայսրության ազգերի ճակատագրերի համահարթեցումը և թուրքերի, քուրդերի, արաբների և ի վերջո հայ զոհերի «հավաքա-կան ցավի ըմբռնումը»: Ներողությունից կամ Ցեղասպանության ընդունումից հեռու այս ուղերձը հավանաբար փորձ է 100-րդ տա-րելիցի նախաշեմին աշխարհին ցույց տալ Թուրքիայի քայլերը՝ միտված «բարեկամությանն ու խաղաղությանը»: Կեղծ ժպիտով և տխուր դեմքով արված այս ուղերձը ոչ այլ ինչ է, քան Թուրքիայի ժխտողական քաղաքակա-նության նոր ձև, դիվանագիտական խաբկանք, որի նպատակն է հավասարեցնել զոհին և ոճրագործին, խոչընդոտել ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու դատապարտմանը: Էրդողանի ուղերձում օգտագործվում է նաև N 14 ստրատագեմն՝ «Փոխ առնել դիակ՝ ոգու վերադարձի համար»: Առաջին հայացքից տարօրինակ թվացող այս բառակապակցությունը քաղաքական բանակցություններում և դիվանագիտության մեջ ուղղված է նոր խնդիրներ լուծելուն՝ հղում անելով անցյալին: Փորձված բանակցողները վկայակոչում են անցյալի դեպքերն ու իրադարձությունները՝ դրանց հաղորդելով նոր իմաստ և ուղղվածություն դժվարին իրավիճակից դուրս գալու նպատակով: Ժամանակակից չինացիներն այս ստրատագեմն մեկնաբանում են հետևյալ կերպ. ա) ունենալով նոր նպատակ՝ կյանքի կոչել ինչ-որ մի բան, որը եղել է անցյալում, բ) ժամանակակից գաղափարախոսական պայքարում օգտագործել հին գաղափարներ, գ) օգտագործել նոր մարդկանց հին քաղաքականությունը

---

[9] **Зенгер Харро фон**, *указ. соч., т. 1, с. 191.*

վարելու համար, դ) լցնել հին գինին նոր տիկի մեջ, ե) օգտվել ցանկացած միջոցից դժվարին դրությունից դուրս գալու համար, զ) մոխրից հառնող փյունիկի ստրատագեմ:

КИТАЙСКИЕ СТРАТАГЕМЫ В ДИПОЛОМАТИЧЕСКОЙ ПРАКТИКЕ МАЛЫХ ГОСУДАРСТВ

НАВАСАРДЯН А. Г.

Резюме

Созданные три тысячи лет назад китайские стратегические алгоритмы, стратагемы, не утратили своей актуальности и в наши дни. Они активно используются в международных отношениях для достижения политических, дипломатических, военных, экономических и личных целей. Китайская стратагемная модель основана на интеллектуальных ловушках и парадоксальных, необычных тактических комбинациях, разыгрываемых главным образом во время дипломатических переговоров. К примеру, ряд стратагем (ном. 5, 9, 10, 14) были использованы Турцией и по сей день используются в отношениях с соседними государствами, в том числе и с Арменией.

CHINESE STRATAGEMS IN THE DIPLOMATIC RACTICE OF SMALL STATES

A. NAVASARDYAN

Abstract

The paper addresses stratagems, the Chinese strategic algorithms created three thousand years ago, which have not lost their relevance and are actively implemented in international relations to achieve political, diplomatic, military, economic and personal aims. The author proves that the model of Chinese stratagem is based on intellectual traps and paradoxical, unusual tactical combinations enacted mainly during diplomatic negotiations. The paper highlights stratagems that serve in the hands of bigger states as an instrument for pressure, robbery, and violence against small countries. In this respect, the author studies several stratagems (N 5, 9, 10, 14), which Turkey applied and is now trying to apply in its relations with neighboring countries, including Armenia.